# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շիրակի խճուղի 144 հասցեում նախատեսվող 3 թռչնանոցների կառուցման և գործունեության ընդլայնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումների վերաբերյալ**

**02.06. 2025թ.** **Սպիտակ համայնք և Արևաշող բնակավայր**

**Հանրային լսմներին մասնակցում էին.**

- Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Սուսաննա Անտոնյանը,
- Սպիտակ բնակավայրի վարչական ղեկավարը,
- Արևաշող բնակավայրի վարչական ղեկավար և բնակիչներ
- Հաշվետվության կազմող մասնագետ Արամ Գալոյանը
- «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները
- Սպիտակի համայնքապետարանի բնակիչներ և այլ մասնակիցներ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի №2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով, 2025թ. հունիսի 2-ին, ժամը 12:00-ին և Սպիտակ համայնքում և նույն օրը՝ Արևաշող բնակավայրում, տեղի ունեցավ «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սպիտակ քաղաքի Շիրակի խճուղի 144 հասցեում նախատեսվող 3 թռչնանոցների կառուցման և գործունեության ընդլայնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումները:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Սուսաննա Անտոնյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացնելով փորձաքննական գործընթացն ու կատարված աշխատանքները:

Սուսաննա Անտոնյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նպատակը, շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդեցությունների մեղմման միջոցառումները, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների և այլնի վերաբերյալ:

Սուսաննա Անտոնյանը ներկայացրեց, որ թռչնաբուծարանը գտնվում է Սպիտակ համայնքի և Արևաշող բնակավայրի հարակից տարածքում, ամենամոտ գտնվող բնակելի տուն (Արևաշող բնակավայր) 177 մետր հեռավորության վրա է գտնվում և այստեղ հնարավոր չէ պահպանել սանիտարական պահպանման գոտին, որը սահմանվում է Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով:

«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պարզաբանեց բարձրացված հարցը՝ նշելով, որ թռչնաբուծարանի տարածքը դեռ խորհրդային տարիներից է տրամադրվել թռչնամսի արտադրության համար և երկար ժամանակ է ինչ տարածքում գործում է կոմբինատը: Բնակելի տները ժամանակի ընթաքում են կառուցվել և հիմա պարզ չի, թե բնակելի կառուցապատումներն են խախտել սանիտարապաշտպանիչ գոտին, թե թռչնաբուծական կոմբինատը:

Հանրային լսման մասնակիցները՝ մասնավորապես բնակիչները հավելեցին, որ ընկերության գործունեությունը շատ կարևոր է համայնքի համար, քանի որ հիմնական աշխատատեղեր է ապահովում համայնքի համար, ինչպես նաև աջակցում է համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերին: Կարևորելով աշխատատեղերի ստեղծման փաստը՝ Արևաշող բնակավայրի բնակիչները փաստեցին, որ տարածքում առկա է ֆոնային գարշահոտություն, որը տարվա շոգ եղանակին ավելի արտահայտիչ է դառնում:

«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նշեց, որ ընկերությունը պատրաստ է իրականացնել մեղմացնող միջոցառումներ: Քննարկվեց կանաչապատման եղանակի փոփոխությունը, բիոգազի արտադրությունը և հատուկ նյութերի կիրառումը, որպիսի գարշահոտությունը նվազի: Մասնակիցների կողմից քննարկվեցին հնարավոր լուծումները, որոնք թույլ կտան խուսափել առկա գարշահոտությունից:

Արևաշող բնակավայրի վարչական ղեկավարը ևս ընդգծեց, որ իրենց համար կարևոր է թռչնաբուծարանի գործունեությունը և արտադրության ընդլայնում, սակայն կարևոր է նաև գարշահոտության վերացման ուղղված միջոցառումները:

Հանրային լսման ընթացքում այլ հարցեր չեն հնչել: Լսումը լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան

**Նախաձեռող «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ»**
**ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** Շին. ծրագրերի ղեկավար՝ Գարիկ Մելքոնյան